

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 7/2

6 մայիսի 2016 թ.

Քննարկվեց Ա/Ձ Անահիտ Ափինյանի 25.04.2016թ-ի դիմումը ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ 09.03.2016թ-ի թիվ 6109920 ակտի դեմ:

Ա/Ձ Անահիտ Ափինյանի գանգատում բերված փաստարկները.

Ա/Ձ Անահիտ Ափինյանը հայտնում է, որ ք.Վանաձորում զբաղվում է մանրածախ առևտրով (փոքրիկ կրպակ) և օրական շրջանառությունը կազմում է 3000-4000 դրամ:

Ա/Ձ Անահիտ Ափինյանը հայտնում է նաև, որ 16.02.2016թ-ին գտնվել է հոգեբանական ծանր վիճակում, քանի որ միակ զավակը ծառայում է Լեռնային Ղարաբաղում: Այդ իսկ պատճառով նշված օրը հաճախորդին ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Արդյունքում Վանաձորի ՏՀՏ աշխատակիցների կողմից տուգանվել է 150.000 դրամով:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Անահիտ Ափինյանը խնդրում է ազատել տուգանքից, քանի որ ի վիճակի չէ վճարելու այդ գումարը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Վանաձորի ՏՀՏ պետի 16.02.2016թ-ի թիվ 6109920 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Անահիտ Ափինյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ 09.03.2016թ-ի թիվ 6109920 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ վճարման է առաջադրվել 150.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ առաջին կարգի մասնագետ Հովիկ Այվազյանի կողմից 16.02.2016թ-ին ժամը 16:10-ին ք.Վանաձոր, Վարդանանց 35գ հասցեում գտնվող Ա/Ձ Անահիտ Ափինյանին պատկանող մանրածախ առևտրի կետից կանխիկ դրամով կատարվել է գնում 390 դրամի չափով՝ 3 հատ կեկա: Ա/Ձ Անահիտ Ափինյանը գումարը չի մուտքագրել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրել: Ստուգում իրականացնող անձինք ներկայացրել են ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման, սակայն Ա/Ձ Անահիտ Ափինյանը հրաժարվել է ծանոթանալ, ստորագրել և ստանալ հանձնարարագրի մեկ օրինակը: Այնուհետև, ժամը 16:11-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն՝ 3550 դրամ ընդհանուր գումարով: Չմուտքագրված 390 դրամը ժամը 16:12-ին մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և կրկին անգամ դուրս է բերվել Z հաշվետվություն:

Ստուգմամբ պարզվել է, որ խախտվել են ՀՀ կառավարության 26.03.2015թ-ի թիվ 379-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 17-րդ կետի 2-րդ

ենթակետի պահանջները, որի համար կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված պատասխանատվությունը՝ գումարով 150.000 դրամ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 26.03.2015թ-ի թիվ 379-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 17-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ պատասխանատու անձը պարտավոր է ՀԴՄ-ի միջոցով տպել և գումարը (ներառյալ կանխավճարը) ստանալու պահին ապրանքի հետ միասին գնորդին, պատվիրատուին տրամադրել կտրոն:

Տվյալ դեպքում ստուգող անձի կողմից 16.02.2016թ-ին ժամը 16:10-ին Ա/Ձ Անահիտ Ափինյանին պատկանող մանրածախ առևտրի կետից կանխիկ դրամով կատարվել է 390 դրամի գնում, սակայն Ա/Ձ Անահիտ Ափինյանը գումարը չի մուտքագրել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Նշված փաստը հիմնավորվել է ստուգումն իրականացնող անձանց կողմից կատարված համապատասխան գործողություններով: Այսինքն, կատարված ստուգմամբ հիմնավորվել է Ա/Ձ Անահիտ Ափինյանի կողմից ՀՀ կառավարության 26.03.2015թ-ի թիվ 379-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 17-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները խախտված լինելու փաստը, որի համար կիրառվել է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համապատասխան պատասխանատվության միջոցը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը՝

ո Ր Ո Չ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ 09.03.2016թ-ի թիվ 6109920 ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ